ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԷՔԱՌԵՐ

ՄԱԿԲԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ[1]

ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

Քաղաքի խաւարչուտ. և ի միջակին կարարայ մի եռացեալ: Որոտումն:

Մտանեն երեք վհուկք։

Առաջին վհուկ

Խայտախարիւ կատուն երիցս նըւաց։

Երկրորդ վհուկ

Երիցս. և մի անգամ հեծեաց ճագն ոզնւոյ։

Երրորդ վհուկ

Փանդեռնահարն աղաղակէ. ժամ է, ժամ։

Առաջին վհուկ

Օ՜ն, պար առեալ զկաթսայիս շուրջ ընթացուք.
Ընկեսցուք անդր ըզթունաւոր փորոտիս։ —
Գորտ, որ ցըրտին ընդ քարամբ,
Ցիւս երեսուն և մի և նոյնչափ գիշերս
Նիրհեալ՝ թոյն իմն ջերմագին մթերեցեր,
Ի դիւթականին սան դու նախ եռացիր։

1 Տես Բ Գրակ. յէջ 174։
ԳՐԱԿ Գ.

digitised by A.R.A.R.@

Ամենեքին

Ցաւել, կըրկնեա՛, աշխատութիւն և վաստակ.
Հուր, բորբոքեայց, և դու կաթսայ, եռացիր։

Երկրորդ Վիճակ

Օձի ջրայնոյ թիկնամէջք,
Եռա՛ի սանն և եփեայց.
Աչք կովադիայ և թաթք գորտոյ,
Մաշկ չըղջիկան և շան լեզու,
Խայթոցք իժի և քարբի սլաք,
Սրունք մողէսի և թև բըւոյ,
Ի մի խառնմամբ ի թուիչութիւն զօրաւորք,
Որպէս ըղթան դժոխոց զնռեալ եռացէք։

Ամենեքին

Ցաւել, կըրկնեա՛, աշխատութիւն և վաստակ.
Հուր, բորբոքեայց, և դու կաթսայ, եռացիր։

Երրորդ Վիճակ

Թեփ վիշապի, ժանիք գայլոյ,
Մումիա վըհկան, խածի ա՛ որկոր
Դիշախանձեալ աղի ծովու շանաձկան,
Մողախընդի արմատ՝ խըլեալ ի մըթան,
Լեարդ հայհոյիչ երբայեցւոյ,
Լեղի քոչի, ուղէշք նոճւոյ
Քանցեալք լուսնին ի խաւարման,
Թաթար չըրթունք և թուրք ռընգունք,
Մատըն տղայոյ՝ զոր բոզ ի ծնունդս
Ի խրամատի միում հեղձոյց,
Թանձրացուցէք և մածուցէք ըզիոխինդն.
Ըզիորոտիս վագեր ի նոյն յաւելցուք՝
Ի նիւթ մերում կաթսայի։

Ամենեքին

Ցաւել, կըրկնեա՛, աշխատութիւն և վաստակ.
Հուր, բորբոքեայց, և դու կաթսայ եռացիր։

digitised by A.R.A.R.@

Երկրորդ Վիճակ

Զայս յարիւն ապուշնայի ցըրտացուցուք.
Կախարդանքն յայնժամ լիցին ողջ և անքոյթ։
(Մտանեն Հեկատէ և այլ երեք Վիճակք).

Հեկատէ

Ո՛հ, ազնիւ է. գովեմ ըզփոյթ խընամոցդ,
Եւ մէն միում ելցէ յարդեանցըն բաժին,
Շուրջ ըզսանիւն առէք արդ երդ նըւագաց,
Իբր ըզճիւաղս և ըզպարիկս հիւ եկեալ,
Ի կախարդել զոր ինչ ի ներքս ամացէք։

Երգ

Ոգիք սեաւք և սպիտակք,
Կարմրանիչք, գորշագոյնք,
Խառնեցէք, խառնեցէք, խառնեցէք
Որ գիտէքըդ խառնել։

Երկրորդ Վիճակ

Ի մարմանէից մատանցս ըզդամ
Ջի անիծեալ ոք այսքր գայ։
Բացցիք, փականք, չէ փոյթ ով ոք և բաղխէ։ (Մտանի Մակբեթ)։

Մակբեթ

Իսկ արդ դուք, զինչ առնիցէք աստ, զհասարակ դիչերաւ
Ուրուականք խորհրդաւորք և սեաւք։

Ամենեքին

Գործ մի անանուն։

Մակբեթ

Երդմնեցուցեալ իմ ըզձեզ ի զօրութիւն ձեր՝ յոր պարծիք,
Տուք ինձ, օն, պատասխանի, որպէս զիարդ և կամիք։
Թէպէտ հողմն արձակեսցիք որք գրոհ տայցեն ի տաճարս,
Կամ յարուսցիք ծուփ փըրփրադէզ որ զնաւս յուզեալ կլանիցեն.
Թէպէտ և հարցի ցորեանըն վականակ, ծառք խըլեսցին,

digitised by A.R.A.R.@

Թէպէտ դըղեակք ի վերայ պահապանաց իւրեանց անկցին,
Թէ և բըրգունք և ապարանք խոնարհեսցեն զգագաթունս
ի հիմունս իւրեանց, թէպէտ զանձքն բնութեան բոլորոյից
վեր ի վայր խառնակիցի, մինչև զ'եղծումն իսկ եղծուլ,
Արարէք բանիցս իմոց պատասխանի։

Առաջին Վիճակ

Խօսեաց։

Երկրորդ Վիճակ

Խընդրեա։

Երրորդ Վիճակ

Մեք տացուք պատասխանի։

Առաջին Վիճակ

Ցակայն, ասա, արդեաք դու
ի շըրթանց մերոց յաւէտ կամիս ըզբանսըն լսել՝
Եթէ ի տեարց մերոց անտի։

Մակրեք

Զայն տուք նոցա դալ, զի տեսից։

Առաջին Վիճակ

Հեղցուք զարիւն կընճի որ զիւր զինքն խոճկորքս լափեաց.
Արկցուք ըզճարպն անդ՝ որ ծորեաց ի սպանողին կախաղանէ,
Եւ ընկեսցուք ըզբնաւն ի հուր։

Ամենեքին

Եկ ի վերուստ կամ ի ներքուստ,
Երևեցո՛ մեզ զանձքն քո և ըզպաշտօն դեղեցկապէս։
(Որոտումն։ Երևի սաղաւարտաւոր գլուխ Ուրուականի)։

Մակրեք

Ասա ինձ, ով զօրութիւնդ անծանօթ...

Առաջին Վիճակ

Ճանաչէ նա զմիտս քո, ըզբանսըն լուր, և մի՛ նչ ասեր։

digitised by A.R.A.R.@

Ուրուական

Մակբեթ, Մակբեթ, Մակբեթ, ի Մակդուփայ ըզդոյշ լեր.
Ցիշխանէն Փիփեայ զդոյշ լեր։ Թողէք երթայց, զի շատ է։ (Անհետ լինի)։

Մակբեթ

Ո՛ ոք և ես, չնորհ ունիմ քոց իմաստուն խորհրդոց։
Կալար դու զլար կասկածանացս։ Այլ, բան մի ևս յաւելցի։

Առաջին վհուկ

Զէ մարթ նրման հրամայել։ Աւասիկ միւս ոմն այլ ևս
Հզօրագոյն քան զառաջինն։
(Որոտումն։ Երևի Ուրուական արիւնաթաթաւ մանկական միոյ)։

Ուրուական

Մակբեթ, Մակբեթ, ով Մակբեթ։

Մակբեթ

Թէ երեք ականջք էին իմ՝ և երիւքն ունկըն դնէի։

Ուրուական

Լեր արիւնախանձ, քաջայանդուգն և խիզախ.
Ծաղր արա քամահանօք ըզմարդկային զօրութեամբ,
Զի ոչ ոք կանանցածին բաւէ ՁՆասել Մակբեթի։ (Անհետ լինի)։

Մակբեթ

Ապա կեաց դու Մակդուփ, առ ինչ երկեայց ես ի քէն։
Այլ կամ է ինձ անկասկած լինել կըրկին, և առնուլ
Դրաւականս ինչ ի բախտէն։ Արդ մի կեցցես դու Մակդուփ.
Զի կարացից ասել առ իմ տրժգոյն երկիւղ՝ թէ սըտէ.
Եւ յորոտման իսկ չանթից առնուլ ըղձիրհ։ — Ո՞վ է այն։
(Որոտումն։ Երևի Ուրուական մանկական միոյ սպակեղոյ, ստեղն ի ձեռին)։
Որ ի դէմս արքայորդւոյ դայ ի տեսիլ, և որ կրէ
Ի փափուկ ճակատուն ոսկի պըսակ արքայաշուք։

Ղմենքիին

Ունկըն դիր, այլ սակայն մի՛ ինչ խօսիր։

digitised by A.R.A.R.@

Ուրուական

Լեր իբր առիւծ
Ահաւոր և խրոխտապանծ, և մի ինչ փոյթ արասցես
Թէ ոք ցանու, թէ վրչտանայ, կամ ոք նիւթէ քեզ չարիս։
Մակբեթ անյաղթ կացցէ՝ ցորչափ անտառն մեծ Բիրնամայ
Ոչ ելեալ գնասցէ ընդդէմ բարձրը լերին Դունսինանայ։ (Անհետ լինի)։

Մակբեթ

Անմարթ է այդ. ո՞ կարասցէ երբեք զանտառ դնացուցանել,
Հրաման տալ ծառոց խլել զիւրեանց արմատս ի յերկրէ.
Քաղցրալուր գուշակութիւնք։ Քաջ է։ Մի բնաւ ամբառնար
Ըզգլուխս քո, վտարանդութիւն, ցորչափ անտառն Բիրնամայ
Ոչ ելեալ խլըրտեսցի, և կեցցէ մերրս Մակբեթ
Ի շուք փառացըն՝ որչափ ետ Նըմա բնութիւն ժամանակ,
Մինչև ըզպարտս իւր վճարեսցէ՝ որպէս վճարէ ամենայն մարդ։
Այլ սիրտս ի վեր վազէ գիտել և այլ իմն ինչ։ Ասացէք, —
Եթէ հնարք արուեստից ձերոց ցայնվայր զօրիցեն, —
Իշխեսցէ յաւուր միում ազդ բանքոյի յերկիրս այս։

Ամենեքին

Մի խընդրեր զայլ ինչ գիտել։

Մակբեթ

Կամիմ գիտել, զոր թէ զլանայք,
Անկցին ի ձեզ յաւէժ անէծք։ Ասացէք ինձ զամենայն,
Առ իմէ կաթեսայս այս ի խորս երկրի սուզանի.
Զի՞նչ իցեն դըժոխային բաժըշտական բարբառքս այս։ (Զայնք փողոց)։

Առաջին Վհուկ

Երևեաց։

Երկրորդ Վհուկ

Երևեաց։

Երրորդ Վհուկ

Երևեաց։

digitised by A.R.A.R.@

Ամենեքին

Ցոյանեանցիք յայրս Նորա, և զսիրտ Նորա տրրտմեցուցէք.
Եկայք իբր ուրուականք, Նոյնպէս անհետ եղերուք։

(Երկիւղ ոք թագաւորք, և անցանեն ընդ թատրն կարգաւ, վերջինն ունելով ի ձեռին հայելի մի. Բանքո զկնի երթայ նոցա)։

Մակբեթ

Բանքոյի ստուերին կարի յոյժ նըմանիս. ան, ի վայր.
Պրսակ քո կիզու զբիրս իմ։ — Եւ դու, ով միւս այլ ճակատ
Բոլորեալ յոսկեղէն թագ, վարագ քո են զոյգ առաջնոյն.
Երրորդ ոմն իբրև զերկրորդն։ Ո՛վ դարչելի դուք վրէուկք,
Ընդէր ածէք ինձ յերևան ըզդոսա։ Չորրորդ ոմն.
Օ՜ն, ի բաց ոստոյիք, բիրք իմ, յակնակապճաց աստի իմոց։
Եւ զի՞նչ, կարդս այս ձըգեսցի մինչ ցըվախճան աշխարհի։
Մի՛ւս ոմն այլ. եօթներորդ ոմն։ — Ոչ այլ կամիմ նըկատել։ —
Աւասիկ ութերորդ ոմն այլ՝ հայելի ի ձեռին,
Որ ամբոխ իմն այլոց ինձ ցուցանէ։ Ցեսանեմ զայլս
Չի կըրեն դունդըս կըրկին և գաւազան մի եռաստեղն։
Ցեսկլ ժանտ. ա՜խ, իմանամ. ճըշմարիտ է, զի ահա
Նրիծաղի առ իս Բանքո համակ յարիւն շաղախեալ,
Եւ իբրև զիւրայինս ածէ զնոսա ինձ ի ցոյց։
Ուրեմն այսպէս եղիցի։

Առաջին վհուկ

Այո՛, տէր, այսպէս լիցի։ —
Այլ ընդէր այդպէս Մակբեթ ըմբըռնիցի յափշտութիւն։
Օ՜ն, արիք, քորք իմ, ըզսիրտ Նորին ուրախ արասցուք,
Եւ ցուցցուք նըմա զմերոց ըզբօսանաց լաւագոյնն։
Արարից ես յօդս հըմայս իմն, և ելցեն ձայնք նուագածուաց,
Եւ ի նոյն խըմբեսցուք մեք ըզպար մեր վաղեմի,
Մինչև մեծս այս թագաւոր ասիցէ մեզ քաղցրութեամբ՝
Եթէ 'նկալաք ընդնա սիրով։

(Երաժշտութիւն։ Կատաւեն վհուկք և աներևոյթ լինին)։

Մակբեթ

Ո՞ւր են նոքա. չըքացան։
Ցաւիտեան անիծեալ լիցի այս ժամ աղիտաբեր։
Եկայք, որ կայքդ ի դուրս։ (Մտանէ Լէնոս)։

digitised by A.R.A.R.@

Լէնոս

Ջինչ խընդրէ տէր իմ արքայ։

Մակբեթ

Ըդբորբս բախտին տեսէք արդեաք։

Լէնոս

Ոչ, տէր իմ։

Մակբեթ

Ո՞չ անցին մերձ առ ձեզք։

Լէնոս

Ճըշմարտապէս, տէր իմ, ոչ։

Մակբեթ

Ապականեալ եղիցի վայրն՝ ուր նոքա ձիավարեն,
Եւ պատժեալք ամենեքին ոչք ընծայեն նոցա հաւատս։
Բայց լըսայ զերիվարաց դրընդիւն. ով է որ եհաս։

Լէնոս

Են երկու կամ երեք հեծեալք, տէր իմ, որ բերեն
Ըզլուր փախըստեանըն Մակդուփայ յԱնգղիա։

Մակբեթ

ՑԱնգղիա փախուցեալ Մակդուփ։

Լէնոս

Այո՛, տէր իմ բարի։

Մակբեթ

Ո՛վ ժամանակ, կանխես արդել լինիս գործոցս ահեղից։
Փախստական են խորհուրդք, և ոչ ի գլուխ ելանեն,
Թէ ոչ և գործըն զոյգ նոցին կատարեսցի։ Բայսմ իակ օրէ
Նախկին թափք սըրտիս՝ լիցին իմոյ ձեռին նախկին թափք։

digitised by A.R.A.R.@

Անդրատին առ ի յարդիւնս ածել զխորհուրդ իմ գործով,
Հարկ է ինձ, այն ինչ յղացեալ զայն՝ իսկ և իսկ կատարել։
Խուժեցից յանկարծօրէն վերայ դղեկին Մակդուփայ,
Տիրեցից փիփեայ, ընդ սուր հանից ըզկինն և զորդիս,
Եւ զամենայն չբուռականս որ ի նմանէ սերեցան։
Ոչ անմիտ ինչ բարբառով մեծաբանեմ, յառաջ քան
Զցերատանալ խորհրդոյս՝ տացի հարուածն. այլ չիք ցնորք։

ՏԵՍԻԼ Բ

Մտանէ Տիկին Մակդուփի, Որդին իւր, և Ռոսսէ։

Տիկին Մակդուփի

Զինչ գործեալ էր նորա՝ մինչև ստիպիլ ի փախուստ
Ցիւրոց հայրենեաց։

Ռոսսէ

Երկայնամիտ լեր, տիկին։

Տիկին Մակդուփի

Այլ նա չեղև։ Ցիմարութիւն իմն է փախուստն նորա.
Եթէ ոչ գործն, երկիւղն ըզմեզ առնեն մատնչուտս։

Ռոսսէ

Դու ոչ գիտես եթէ նորայն իմաստութիւն էր թէ երկիւղ։

Տիկին Մակդուփի

Իմաստութիւն, թողուլ ըզկին իւր ըքանեալ ըզմանկունս,
Ըզտուն իւր, ըզպատիւս, անդ, և ի բաց խուսափիլ։
Ոչ սիրէ նա զմեզ, բնութիւն ըզսիրտ նորա ոչ շարժեաց.
Ցախսարեկն ողորմուկ, և փոքրագոյն իսկ թրչնիկն,
Պաշտպանէ ձագուց իւրոց ընդդէմ բրուոյ ի բունին։
Լոկ երկիւղ է ի նմա, չիք սէր, և միտք փոքրիմաց
Ձեպեցին զանհանճար և զիսոլ խուճապ փախչուտեանն։

digitised by A.R.A.R.@

Ռոսսէ

Սիրելի դուստր հօրեղբօր, հայցեմ, աղէ՛ ըղդատ լեր.
Զի այր քո աղնըւական է, իմաստուն, հանճարեղ,
Եւ զհաճոյս ժամանակին նա կարի քաջ ճանաչէ։
Այլ ինչ ոչ ժրտիմ ասել. այլ ժամանակքս անգութք են յոյժ,
Ցորս յանգէտքս մեր՝ մատնիչս յանդիմանիմք, և ըղդամք
Զի գոն մեր իրք խիթալիք, թէ և գիտակ նոցին չեմք.
Եւ յահեղ և սրրտմրտեալ ծովու՝ աստ անդ տատանիմք։—
Արդ հրաժեշտ առնում ի քէն. ոչ յամեցիցդ առնալ գալ։
Ցորժամ իրք ի չարագոյն ծայր ժամանեն, զկայ առնուն,
Եւ կամ դարձ առնեն ի կէտն՝ ուր զառաջինքն կային։
(Խօսելով առ մանուկն Մակդուի Տիկնոջ)։
Հօրեղբօր որդեակ սիրուն, երկինք ըզքեւ հրսկեսցէ։

Տիկին Մակդուի

Ի նորա հայր ծընող, և սակայն նա անհայր է։

Ռոսսէ

Այլ եթէ ոչ գընայցիս՝ եղէց կարի խելագար։
Թէ տակաւին յամեցիցդ աստ, անձամբ զանձն իմ կորուսցից,
Եւ ի վտանգ արկից ըզքեզ. ուրեմն ողջամբ մընա դու։ (Ելանէ)։

Տիկին Մակդուի

Որդեակ իմ, հայր քո մեռաւ, զինչ գործիցես դու այժմիկ,
Զի՞արդ ապրեսցիս։

Որդին

Իբրև զթըռչունքս, մայրիկ։

Տիկին Մակդուի

Զինչ. որդամբք և ճանճիւք։

Որդին

Ի՞ և գըտից իբր ըզնոսա։

digitised by A.R.A.R.@

Տիկին Մակդուֆ

Հէք թըռչուն, չէք ուրեմն քեզ երկիւղ ի վարմից,
ի ցանցից և յարձուլից։

Որդին

Հիմ յայնոցիկ երկեցայց, մայր.
Ոչ փանաքի թըռչնեկաց ձըգին թակարթքն այնոքիկ։
Պակայն հայր իմ չէ մեռեալ, զոր օրինակ դուդ ասես։

Տիկին Մակդուֆ

Մեռաւ, ասեմ քեզ, և ուստի գըտցես դու քեզ այլ ոք հայր։

Որդին

Ո՞ւր դըտցես դու այլ ոք այր։

Տիկին Մակդուֆ

Ինձ մարթ է ստանալ քըսան այր
Եւ յառաջնում սակարկութեան։

Որդին

Զի զնոյնս անդրէն վաճառեացես։

Տիկին Մակդուֆ

Նըրբիմաց խելոք խօսիս, նա և քան զտիս քո ի վերս։

Որդին

Հայր իմ, մայրիկ, մատնիչ ոք էր։

Տիկին Մակդուֆ

Այո։

Որդին

Այլ զինչ է մատնիչն։

digitised by A.R.A.R.@

Տիկին Մակդուֆ

Որ երդնու և զանց առնէ։

Որդին

Որ զայս գործեն՝ մատնիչք են բնաւք։

Տիկին Մակդուֆ

Այո՛, արժանիք են խեղդամահ լինելոյ։

Որդին

Եւ նոքա բնաւք որ երդնուն և որք զայնու անցանեն
Արժանիք են կախելոյ։

Տիկին Մակդուֆ

Բնաւք։

Որդին

Եւ ո՞ զնոսին կախիցէ։

Տիկին Մակդուֆ

Արք պարկեշտք։

Որդին

Ապա չամբուշ են որք երդնուն և սրտեն զայն,
Զի այնքան մեծ է թիւ նոցին՝ մինչև զպարկեշտս հարկանել
Եւ կախել ըզնոսին։

Տիկին Մակդուֆ

Օգնեսցէ քեզ Տէր Աստուած,
Կապիկ ողորմելի։ Այլ ո՞ւր դիտցես դու հայր ոք։

Որդին

Եթէ հայր իմ մեռեալ էր, արտասուէիր դու արդեաք.
Եւ զի ոչ լաս, ապա ընդ հուպ զայլ ոք ես հայր ունիցիմ։

digitised by A.R.A.R.@

Տիկին Մակդուի

Ողորմուկ լեղուանի, իբրև զի գու շաղիաղիես։

(Մտանի Պատգամաբեր ոչ)։

Պատգամաբեր

Օրհնեսցէ ըզքեզ Աստուած, ով գեղեցիկըդ տիկին։
Անծանօթ եմ քեզ, թէպէտ ծանօթ է ինձ բարձ քոյին։
Երկընչիմ եթէ վտանգ ինչ ի վերայ քո հասեալ կայ.
Եթէ զհետ խրատու՝ անկեղծ առն հետևել կամիցիս,
Մի այլ ևս կացցես աստ. փախիր մանրիկ մանկամիջ քովք։
Անողորմ գրտայ այսպէս զքեզ ահաբեկ առնելով.
Զարադոյն ևս լինէր չառնել ըզքեզ խելամուտ
Վերահաս գաղանութեանն։ Զատեսցէ զքեզ Աստուած։
Ընդերկար ևս յամել չհամարձակեմ ես աստէն։ (Ելանէ)։

Տիկին Մակդուի

Ո՞ւր անկայց ես ի փախուստ. չիք իմ ինչ մեղս արարեալ։
Այլ յիշեմ զի կամ ես յաշխարհիս աստ երկրաքարշ,
Ցոր զառածելն ի չարիս՝ յաճախ լինի գովելի,
Եւ գործել զբարիս՝ երբեմն յիմարութիւն վտանգաւոր։
Վա՛հ, ի՞նչ յառաջ մատուցից զայս կանացի պաշտպանութիւն,
Թէ «Չիք իմ ինչ մեղս արարեալ»։ — Չինչ երեւք են այսոքիկ։

(Մտանեն Սրիկայք)։

Սրիկայ

Ո՞ւր իցէ այր քո։

Տիկին Մակդուի

Ոչ յայնքան ի նրզովեալ ինչ տեղւոջ,
Որպէս յուսամ, մինչև այր ոք իբրև ըզքեզ գրատցէ զնա։

Սրիկայ

Մատնիչ է նա։

Որդին

Սուտ ասես, այ թաւամազ չինական։

digitised by A.R.A.R.@

Սրիկայ (Հարեալ զնա սրով)։

Զիարդ դու, ձու մի, ելեալ ի խեճեպոյ մատնըչին։

Որդին

Ըսպան զիս նա, մայր իմ. ոհ, աղաչեմ, փրկեա զանձն։

(Մեռանի։ — Տիկինն Մակդուի փախչի աղաղակելով. Սպանուրինն. Սրիկայք պնդին զհետ նորա)։

ՏԵՍԻԼ Գ

Ցանգդիա։ — Սենեակ յապարանս արքային։

Մտանեն Մալկոլմ և Մակդուի։

Մալկոլմ

Խընդրեսցուք միայնութեան ուրեք տեղի խաւարին,
Եւ զմերոց ողորմ սըրտից անդ զարտասուս վիժեսցուք։

Մակդուի

Նա 'ւանիկ բուռն հարեալ ի սուր սատակիչ, և առնաբար
Խաղասցուք մեծաքայլ ի հայրենիս մեր յոտընհար։
Ցամենայն առաւօտու յոգւոց հանեն նորոգ այրիք
Եւ նոր որբք ճըչեն, նոր վիշտք զերեսս երկնից հարկանեն,
Որ թընդայ, իբրու կրելով ըղձառապանս Ըսկոտիոյ,
Եւ կամէր իմն արտասանել զայնս հանգունակ հառաչմամբ։

Մալկոլմ

Ողբամ զայն՝ յոր հաւատամ, հաւատամ յայն՝ զոր գիտեմ.
Եւ զոր մարթ է ինձ ուղղել, վաղվաղակի ուղղեցիս՝
Ի զտանելըս ժամ դիպող։ Զոր դուդ ասես՝ ելցէ ստոյգ.
Բըռնաւորն՝ որոյ անուն սոսկ ըլլեզուս մեր կիզու,
Ա՛յր բարի դըտաւ երբեմն։ Դու զնա ուժգին սիրեցեր.
Դեռ ոչ մըխեաց ձեռն ի քեզ։ Երիտասարդ ոմն եմ ես,
Ա՛յլ յիրս ինչ կարես ինձ ընդ միտ նորին մըտանել.
Եւ է գործ իմաստուն՝ ընծայել գաւըն մի հէք,
Անմեղ և՝ անզօր՝ առ յողոք ածել զաստուած ոք զայրագին։

digitised by A.R.A.R.@

Մակդուֆ

Ցեմ ես մատնիչ։

Մալկոլմ

Այլ Մակբեթ է։ Աչառելով յարքայէ
Քաջալաւ և բարի այր կարէ վրիպել. ներեա ինձ զայս։
Խորհուրդք իմ ոչ կարեն փոխել զքեզ և առնել որ ինչ չես։
Դեռ պայծառ են հրեշտակք, թէպէտ անկաւ պայծառագոյնն։
Թէ և բնաւ պըղծութիւնք զուղղութեան դէմն ըզդեցցին,
Ուղղութիւն միշտ նոյն կացցէ։

Մակդուֆ

Կորուսի զյոյս ամենայն։

Մալկոլմ

Թերևս անդ՝ ուր ես գըտի զկասկածանացս իմոց խէթ։
Որ միտք յանկարծագ ետուն թողուլ քեզ ըզկին քո,
Եւ զորդիս, ըզգեղեցիկ պատճառս գործոցըս մերոց,
Եւ զհըզօր սիրոյ կապանս, զյետին ողջոյնն իսկ ոչ տըւեալ։
Մի թուեսցին քեզ, աղաչեմ, կասկածանքս իմ այսոքիկ
Ցանարգանս ինչ լինել քեզ, այլ յառնել զիս լոկ անքոյթ։
Զինչ և զքէն խորհեցայց, դու միշտ լիցիս այր արդար։

Մակդուֆ

Հեղ զարիւն քո, հեղ զարիւն, թըշուառական հայրենիք.
Եւ դու պինդ կաց ի խարբսխի քում, ահագին բըռնութիւն,
Քանզի ոչ խիզախէ ճընշել ըզքեզ ուղղութիւն։
Եւ դու տար ըստանաց քոց. և կարի իսկ յիրաւունս։ —
Ողջամիտ կաց, տէր, ոչ կամիմ լինել վատաշուէրըն զոր կարծես,
Վասն ընդարձակ հանուր երկրին որ ընդ մագլաք բըռնակալին,
Թէպէտ ի նոյն յաւելցին և ճոխութիւնք Արևելից։

Մալկոլմ

Մի լինիր անձնանախատ, ոչ ըստուգիւ խիթամ ի քէն.
Դիտեմ զի հայրենիք մեր ընդ լրծով հեծեծէ,
Զի ողբայ, արիւն հոսէ, և օր քան զօր վէրքն յաւելուն.
Դիտեմ՝ եթէ բազմաց բազուկք վասն իմ զէն առցեն,

digitised by A.R.A.R.@

Եւ զի աստանօր իսկ ի գերապանծս Անգղիա,
Աշակից ինձ ընծայեցան՝ հաղարաւորք կորովեաց։
Բայց սակայն ի կոխել իմ առ ոտս ըզգլուխ բրնաւորին
Դամ ի ծայր վարսել սրրոյս, թշնամական հայրենեաց
Հասցեն աղէտք մեծագոյն քան զառաջինն, և չար ևս
Դիրեսցէ ի յաջորդէն և զանազան եղանակաւ։

Մակդուի

Իսկ արդ ո՞ եղիցի նա։

Մալկոլմ

Եւ ինքն, ես, յիս ախտք ամենայն
Այնպէս ձրգեալ են խոր արմատրս, զի յորժամ յայտնեսցին,
Մակբեթ սեաւն՝ երևեսցի իբրև ըզձիւն ըսպիտակ,
Եւ եղուկն Ըսկովտիա գառն իմն ըզնա համարեսցի,
Ընդ իմոց անհընարին չարեացս ածեալ ի կըշիռ։

Մակդուի

Այլ սակայն ի լեգէոնրս դրժոխոց, չիք սատան
Ամպարիշտ և նրզովեալ՝ որ զՄակբեթաւ դրլեսցէ։

Մալկոլմ

Ճանաչեմ ըզնա այր ոք արիւնահեղ և վավաշ,
Ագահ, սուտ, նենգաւոր, դառնաբարոյ և դրժնեայ,
Ցամենայն հատեալ չարիս՝ որոց անուն մի գուցէ։
Այլ իմոց տրամփից չիք չափ, ոչ կանայք ձեր, ոչ դրստերք,
Ոչ տիկնայք, ոչ օրիորդք, բաւեն ըընուլ զգուր հեշտութեանս.
Եւ դրլէ ցանկութիւն իմ զամենայն խոչ և ըզխութ։
Լաւագոյն է յոյժ Մակբեթ քան արքայ ոք իբրև զիս։

Մակդուի

Անյագուրդ հեշտախտութիւն՝ է բընութեան բրնութիւն։
Նա է որ թափուր կացոյց զաթոռս երջանիկս,
Եւ զբազում յարքայից խըլեալ ենան ի պատուոյն։
Այլ որ ինչ քեզ պատկանի, մի՛ ինչ խըղճեր առնուլ զայն.
Ասպարէզ լայնատարր առաջի կայ քեզ հաճոյից,
Զոր թէ ծածկել գիտասցես, երևեսցիս ցուրտ ոք այր։
Եւ դարձեալ, չպակասեն մեզ կամայօժար կանանի,
Եւ անգղն որ ի քեզ, չկարէ յոշել զամենայն
Ընծայեալս արքայիդ, թէ յայտնեսցին քո բաղձանք։

digitised by A.R.A.R.@

Մալկոլմ

Այս չէ չատ։ Ցանարդ բնութեան իմում դոյ այլ կերք յարափթիթ,
Ընչաքաղց ագահութիւն, մինչ զ'ի լինել իմում արքայ,
Ի մահ ըղճոխքս վարէի, առ ի կորզել զերկիրս նոցին.
Ակն եղեալ ցանկայի ականց միոյն, միւսոյն տան.
Եւ որքան չատ ըստանայի, առաւել ևս աճէր յիս քաղց։
Ցուզէի կազս անիրաւս ընդ անխարդախ և զգաստ անձինս,
Եւ կործանեալ ըզնոսին՝ կողոպտէի զինչքս նոցա։

Մակդուֆ

Թափ անցանէ ագահութիւն, և խորարմատ է քան զտրուփանս.
Արքուն տիոց պլտուղ անսուրբ։ Ագահութիւն էր սուրն այն
Որ զարքայս մեր փողոտեաց։ Այլ և աստի չիք երկիւղ։
Սկովտիոյ են մեծութիւնք ի լընուլ զիղձ քո կըշտապինդ,
Եւ լոկ ընչիւք ևեթ քոյովք։ Մարթի է տանել մեզանացս՝
Թէ զոյգ նոցին երևեսցին և ուղղութիւնք։

Մալկոլմ

Այլ իմ չիք.
Լաւութիւնք՝ որ վայելուչ են արքայից, արդարութիւն,
Զգաստութիւն, ճըշմարտութիւն, հաստատութիւն, բարութիւն,
Պընդութիւն, համեստութիւն, համբերութիւն, գըթութիւն,
Խրախոյս և արութիւն, չազդեն համբուն ինձ ճաշակ։
Այլ զամենայն ըզգամ յիս ախտս, և ամենայն նոցուն չափս
Եւ պէսպէս գունակաքն, և հաճեմ զայնս ամենեքիսն։
Տիոնա, թէ էր յիս կար, ի գրժոխս անդր հոսէի
Զքաղցըր կարթն հաշտութեան, զհանգիստ հանուրց խռովէի,
Ցըրուէի զամենայն ինչ որ միացեալ է յերկրի։

Մակդուֆ

Ո՛ Սկովտիա, Սկովտիա։

Մալկոլմ

Եթէ այր ոք այդպիսի
Արժանի է իշխելոյ, խօսեաց, ես եմ այն, որ խօսիմ։

Մակդուֆ

Իշխելոյ արժանի. Նա և ոչ կելոյ։ Ո՛վ հէք ազգ,

digitised by A.R.A.R.@

Ընկճեալ 'նդ անգութ գաւազանաւ անփառունակ բրնաւորի.
Ե՞րբ ծընցին միւսանգամ գեղեցկափայլ աւուրք քո։
Ահա ստոյգ գահու քո ծնունդ նրզովէ զանձն՝ իւր չբրթամբք,
Եւ անէծքս կարդայ և հայհոյէ զիւր սերունդ։ —
Հայրըն քո արքայաշուք եղև արքայ ոմըն սուրբ.
Դըշխոյն՝ որ զքեզ կըրեաց, ի ծունկսն յաւէտ քան յոտին,
Մեռաւ յաչխարհի զոր ամենայն զոր և եկեաց։
Ողջամբ կաց. մեռքդ այդոքիկ որով ըզքէն ամբաստանես,
Ցաւիտեան զիս ի Սկովտիոյ արտասահման վարիցեն։ —
Աստանօր, ով սիրտ իմ, ամենայն յոյս քո զրաւի։

Մալկոլմ

Սըխրալի զայրուկդ այդ, Մակդուփ, ծընունդ ուղղութեան,
Զամենայն սեաւ երկեանս ի բաց տարաւ ի սըրտէս,
Եւ զմիտս իմ ընդ հաւատոց քոց և պատուոյ միաբանեաց։
Դիւաբախըն Մակբեթ հնարեաց յոլով հանդէտ հնարս
Զիս առ յինքն յանկուցանել. ըզդօնութիւն իմ համեստ,
Պաշտպանեաց ինձ ընդդէմ գիւրահաւատ կործանման։
Այլ Աստուած, որ էն յերկինս, ընդ իս է՝ ընդ քեզ կացցէ վրկայ։
Ցայսմհետէ ի քո ձեռըս զիս առնեմ ապաստան,
Եւ ժըխտեմ զըրպարտութիւնսըն զոր զինէն խօսեցայ,
Ուրանամ զեպերս և զբիծըս զոր անէին իմում եդի.
Օտար են այնք յիմոց բարուց։ Դեռ ըզկին ոչ 'գիտացի,
Ոչ զանցի երբեք զերդմամբ, հաղիւ իմոյն ցանկացայ,
Չհաւատս իմ ոչ մատնեցի, զգևն ընկերին իւր չյայտնէի,
Եւ ոչ զբստուգութիւն նըւաղ քան զկեանըս սիրեմ։
Առաջին սուտ այն է իմ զոր արդ զինէն յօդեցի։
Որ ինչ եմն արդեամբք՝ եմ քո և հէք երկրիս, հրամայեա ինձ։
Մինչև եկեալ էր քո և այսր հասեալ, Սիվարդ ծերունին
Ցան հազար քաջ որերոյ զմիով տեղեաւ գումարեալ,
Ի Սկովտիա կոյս խաղայր։ Արդ երթիցուք մեք ի միասին,
Եւ իցիւ թէ բախտ կըշիռ արդար գործոյս ընթացցի։
Ընդէք դու անմրռունչ կաս։

Մակդուփ

Ծանր է ինձ առժամայն
Միաբանել զայսքան իրս ուրախականս և տրխուրս։
(Մտանէ բժիշկն)։

Մալկոլմ (Առ Մակդուփ)։

Քաջ է, դարձեալ խօսեսցուք։ — Ելցէ՞ արքայ, ասա ինձ։

digitised by A.R.A.R.@

Բժիշկ

Այո՛, տէր, կան ըսպասեն անդ բազմութիւնք եղկելեաց
Բըժըշկիլ ի նմանէ։ Ախտ նոցին եհան ի դերև
Չվեհագոյն հնարս արուեստին. սակայն առ որս հըպի նա՝
Զօրութեամբըն սըրբով զոր ձեռացն այն ետուն երկինք,
Նոյն հետայն ապաքինին։

Մալկոլմ

Շընորհ ունիմ քեզ, բըժիշկ։ (Ելանէ Բժիշկն)։

Մակդուֆ

Զորպիսի՞ ախտից ասէ նա։

Մալկոլմ

Թորշորջի խոզատանձ,
Գործ հրաշանըշան առաքինի իշխանիս,
Զոր տեսի բազում անգամ յորմէհետէ եմ Լենգլիա։
Ի՞նչ երկինք լըսեն նըմա, նըմա ևեթ է գիտել։
Այլ ըստոյգ է զի անձինք օտարոտի ջերեալ ախտիւք,
Տոհմեալք և խըղխայթեալք, ողորմելիք ի տեսիլ,
Վհատեցուցիչք բըժըշկութեան, նովաւ գըտին զառողջութիւն։
Դախէ նա զպարանոցէ նոցին չիգդ ինչ ոսկեղէն,
Ջերմ աղօթս մըրմընջելով, և ասի, թէ թողցէ նա
Ազգայից իւր յաջորդաց ըզզօրութիւնս այս սուրբ բուժիչ։
Բաց աստի, է երկնային նորա պարգև՝ գուշակութիւն,
Եւ օրհնեալ բիւրք որ պատեն զաթոռ նորա, պատմեն մեզ
Եթէ լի է նա շնորհաք։ (Մտանէ Ռոսսէ)։

Մակդուֆ

Տեսէք, ո՛ այսր հասանէ։

Մալկոլմ

Մին յիմոց հայրենակցաց. այլ ճանաչեմ ոչ ըզնա։

Մակդուֆ (առ Ռոսսէ)։

Ազգական իմ սիրելի և լաւ, ողջամբ գալուստ քո։

digitised by A.R.A.R.@

Մալկոլմ

Ճանաչեմ այժմիկ ընձա։ Ո՛վ դու Աստուած բարերար,
Փարատեա վաղ ըզպատճառս որ զմեզ օտարքս գործեն։

Ռոսսէ

Ամէն, տէր։

Մակդուֆ

Սկովտիա կայ դեռ ի տեղւոջ անդ իւրում։

Ռոսսէ

Աւաղ, հէք հայրենիք. զանգիտէ զանձն իւր ճանաչել։
Զէ մարթ մայր մեր ընձա յորմէ՛ որ չիրիմ մեր։
Հայրենիքս ողորմ, ուր բաց յայնց որոց չիք գիտութիւն,
Զբտեսանի համբուն ժրպիտ յերեսս ուրուք և անդամ մի.
Ուր հառաչք և հեծեծանք և աղաղակք ցաւագինք
Պատառեն զօդն ընդհանուր, և ոչ է ոք որ լըսէ.
Ուր բուռըն ցաւք նորաձև հիացական թըւին մոլուցք.
Ուր զանգակըն մեռելոց հընչէ, վասն այր, ոչ խընդրի.
Ուր ցընդին կեանք լաւ մարդկանըն չև հասեալ յալեւոյթ,
Իբր ըզծաղիկըս որ պըճեն ըզգըլխանոցըս նոցին,
Մինչև իցեն թարշամեալք։

Մակդուֆ

Ո՛հ բանք կարի դըժընդակք,
Եւ սակայն յոյժ ճըշմարիտք։

Մալկոլմ

Եւ ո՞ր այն է աղէտքն յետին։

Ռոսսէ

Աղէտք ժամու միով լոկ հին. հենդնեն ընձա՝ որ պատմէն.
Մէն մի վայրկեան նորանորս ծնանի։

Մակդուֆ

Ջիաբդ կայ կին իմ.

digitised by A.R.A.R.@

Ռոսսէ

Բարուղք։

Մակդոնի

Եւ որդեակք իմ։

Ռոսսէ

Նոյնպէս բարուղք և նոքա։

Մակդոնի

Ո՞չ ձբդեաց դեռ բրոնաւորքն ձեռն յանդոյր կեանս նոցին։

Ռոսսէ

Ոչ, յորժամ թողի զնոսա, վայելէին դեռ յանդորրու։

Մակդոնի

Մի՛ գուցէ ազահիցես ի բանս. զիա՞րդ իրքն իցեն։

Ռոսսէ

Մինչ հասի ես ասա՝ բերել զբօթա՝ որ ընկճեն զիս յոյժ յոյժ,
Բան ճառէր եթէ բազում արք քաջք անկեալ են ի չու.
Առաւել իրաւամբք ընծայեցի այնմ հաւատս,
Տեսեալ զբրոնակալին զօրութիւն կալմ և պատրաստ։
Ահա արդ ժամ է փրրկութեան, ընդ ակնարկել քո աեթ
Ի Սկովտիա՝ յարիցեն զօրք, և կանայք մեր իսկ կրուեսցին,
Ուր ուրեմբն զրաւ առնել իւրեանց դրժնէ ազէտից։

Մալկոլմ

Սփոփեսցին նոքա. ծն մեք ի Սկովտիա ընթասցուք.
Զուարթառատն Անգղիա ետ մեզ տան հաղար զինաւորս
Եւ ըզքաջըն Սիվարդ, ըզհինաւուրց և զընտիրն
Ցամենայն զօրականաց քրիստոնեայաշխարհին։

Ռոսսէ

Տայր ոք ինձ ըսփոփանացս այս հաւասարքս կրչռել.
Ա՛յլ են իմ բանք՝ զորս հարկ էր ինձ գուժել յօդս անապատի,
Ուր չհասանէր ունկն ի լսել։

digitised by A.R.A.R.@

Մակդուֆ

Ցինչ հային բանքդ. յիրս հանրական,
Եթէ տրիտուրք ինչ են ցաւոց որ պատշաճին առ մի սիրտ։

Ռոսսէ

Չիք այր ըզդաստ՝ ում չելցէ մասն ինչ յաղէտիցս այսոցիկ,
Թէպէտ և մեծագոյնքն քեզ ևեթ սոսկ անկ է։

Մակդուֆ

Եթէ իմ է այն, մի այլ յերկար յինէն ծածկեր զայն.
Թող փութով գիտացից։

Ռոսսէ

Մի գուցէ ունկըն քո ի սպառ
Զըզուեսցէ զլեզուս, որ կայ ըզսոսկալիս բարբառել։

Մակդուֆ

Այ, խմանամ։

Ռոսսէ

Ի բուռն անկաւ յեղակարծուց դըղեակ քո։
Կին քո և որդիք գազանօրէն խողխողեցան։
Եթէ զդիարդն էր ինձ ասել, ի սպանդ եղանցըն զենլոց՝
Արդեօք և քո մահ յաւելոյր։

Մալկոլմ

Ով Տէր Աստուած, գրթութեան։ —
Մի ըզխոյր քո, սիրելի, ի վայր ածեր ըզյանիւքդ,
Տուր բարբարոս ցաւոց քոց. վիշտք որ լըռեն անդրշունչ,
Մըռընչեն յանձուկ սըրտի և տան Ներմին խորտակել։

Մալկոլմ

Եւ որդեակք իմ։

Ռոսսէ

Կին, որդիք, ծառայք և բնաւք որ անդ գըտան։

digitised by A.R.A.R.@

Մակդուի

Եւ ես իբր անդ ոչ դիպեցայ։ Եւ կին իմ ևս ըսպանեալ։

Ռոսսէ

Ասացի զայն։

Մալկոլմ

Քաջալերեաց, խրնդրեսցուք վրէժ ահագին,
Դարման իմն ի բըժըշկել զմահաշրջուկ աղէտս այս։

Մակդուի

Զեն նորա որդիք։ — Ըզբնաւ բարետեսիլ որդեակս իմ,
Ասացեր դու, զբնաւս. ոհ, անգըղ դըժոխոց, ըզբընաւս։
Զիարդ, զիմ զամենայն սիրուն հրեշտակը փոքըրկունս,
Եւ ըզմայր նոցա, ի մի հարուած բարձեալ ամենեքին։

Մալկոլմ

Իբրև այր արիասիրտ ժուժեա այդմիկ։

Մակդուի

Արարից.
Այլ սակայն հարկ է ինձ ըզդալ և իբրև այր։ Զէ ինձ մարթ
Արկանել ի մուռացօնս զէակս այնքան ինձ փարելիս։
Զիարդ զայն տեսին երկինք, և ոչ հասին ի թիկունս։
Ո՛վ մեղապարտ Մակդուի, անկան ամենեքին վասըն քո։
Եղուկ ինձ թըշուառիս, ոչ առ ի մեղս ինչ նոցուն,
Այլ վասն իմոցս՝ արկած մահու արկ ըզնոսա յարեւ։
Խաղաղութիւն Աստուծոյ եղիցի արդ ընդ նոսին։

Մալկոլմ

Ցեսան լինիցի այդ առ ի սրբել ըզսուր քո։
Դարձցի ցաւ քո ի զայրոյթ. մի լուծցէ նա ըզսիրտ քո.
Այլ գըրգռեսցէ յաւէտ զայրուց։

digitised by A.R.A.R.@

Մակդոնի

Ո՛հ, մարթ է ինձ այօքս իմովք
Իբրև զկին արտասր հեղուլ, և լեզուաւս իմ ճառատել. —
Այլ, ով երկինք հաչտարար, արագարագ հասո վախճան.
Հան զմեզ ճակատ առ ճակատ, զիս և զատտանն Ըսկովտիոյ,
Կացո զնա հուպ ի չափ երկայնութեան սուսերիս.
Եւ թէ խոյս տացէ յինէն, յայնժամ թողեալ լիցի նմա։

Մալկոլմ

Քաջի առն է բարբառ քո։ Արի, երթամք գտանել զարքայն.
Պատրաստ են զօրք մեր ... չընկայ ինչ այլ բայց զվերջին տալ հրաման։
Մակբեթ մերձեալ է ի յանկումն, և զօրութիւնք երկնայինք
Ի կործանումն իւր զինուորին։ Իւ և կարես զօրացիր.
Երկարաձիգ է գիշեր որ չհասանէ տրբընջեան։ (Եկաւեն)։

Կը շարունակուի։

ՊԵՐՋ ՅՈՐԴՈՐԴ ՀԱՆԴԻՍԻՆ

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Տրապիզոնի թէյ. — Անգղիերէն օրագիրն Pall Mall Gazette լուր կու տայ թէ Տրապիզոնի մօտերը բոյս մը գտնուեր է որ առաջին կարգի թէյ կու տայ, և շատ առատ մօտակայ անտառներուն մէջ բայց մացառուտ ու անմէկ վիճակ ունի։ Այս բոյսին տուած թէյը հաւասար Զինաստանի թէյին անոր զօրութիւնն ու համեմն ունի։ Պարսիկներն որ այս նիւթոյն վրայ քան զամենն աւելի լաւ դատաստան կրնան ընել, վասն զի չափազանց թէյարբու են, մէկէն ճանչցեր են Տրապիզոնի այս թէյին յարգը. և գնելով այս բոյսին տերևները Պարսկաստան դրրկեր են։ Մինչև հիմայ գիւղացիք արևուն կը չորցունեն այն տերևները, որով բոյսին բնական դառնութիւնը վրան կը մնայ։

Տրապիզոնի կուսակալը գուշակելով թէ ինչ մեծ օգուտ կրնայ գալ երկրին եթէ խրախուսուի այս բուսոց մշակութիւնը, կառավարութենէն խնդրեց որ անտառաց վրայ եղած իրաւունքը վերցունէ այս տեղուանք ուր այս մշակութիւնը պիտի ըլլայ։ Միւս կողմանէ ալ կ'ըսուի թէ տուրք պիտի դրուի այս բոյսին վրայ 20 առ %, որ եթէ ստուգուելու ըլլայ, վերոյիշեալ լրագիրը կը վախէ թէ գիւղացիք շատ ետևէ չեն ըլլար մշակելու այս տեսակ բոյսերը։

Երկրիս բնակչաց թիւը. — Ուրիշ անգամներ ալ տուեր ենք երկրիս բնակչաց թիւը, սակայն մօտերս եղած քննութիւններն աւելի ճշդած կը համարին այս թիւը, և կը հաշուեն թէ ներկայապէս երկրիս վրայ ըլլայ 1,440,000,000 բնակիչ։ Ի վերայ այսր ամենայնի շատ անգամ այս թիւը չի հիմնուիր ճիշդ հաշիւներու վրայ, մասնաւորապէս նկատմամբ Զինաստանի, Աֆրիկէի, Աստրալիայի և Բոլիվիդիայի։

Եւրոպա ունի 312,398,480 բնակիչ. Ասիա՝ 831,000,000. Աֆրիկէ՝ 205,219,500. Աստրալիա և Բոլիվիդիա՝ 4,444,300. Ամերիկա՝ 86,446,000։

Երկրիս մակերեսութիւն իւրաքանչիւր քառակուսի մղոնին, միջական հաշուով, 589 բնակիչ կ'ընկնայ։

digitised by A.R.A.R.@